

Տարեկան գինը 10 ռուբլի է տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

(Պատրաստողները գիտում են ուղղակի
Тифлис. Редакция „Миръ“)

ՄԵԼԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և սուրբ օրերէն):

Հայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Հայտարարութիւնները համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԳԱՅԻՆԻՒՆ

Մամուլի ազատութիւնը—նախ քան տեսութիւնը: Մի քանի խօսք մեր հոգեւորականների մասին: Նամակ Ղազարից, Նամակ Գաւորուից, Ներքին լուրեր: Արտաքին տեսութիւնը: Յուսատեան: Մշակիչ հեռագիրներ: Յայտարարութիւններ: Բանասիրական: Գրականական: Նկատողութիւններ:

ՄԱՄՈՒԼԻ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

Վերջին ժամանակները ուսումնարանների ամբողջ լրագրութիւնը սկսել է նուիրել մշակված յոգևածներ մամուլի ազատութեան խնդրին:

Այն երկիրները, ասում է Փրանսիացի Լաբուլէ հեղինակը, որոնք մամուլի կատարեալ ազատութիւն են վայելում, նրանք միշտ աւելի առաջադէմ են թէ տնտեսական, թէ վարչական և թէ մտաւոր զարգացման կողմից:

Մամուլը արտայայտութիւն է հասարակական կարծիքի, ազդի տնտեսական և բարոյական պահանջների, բացի սորանից մամուլը այն անսպառելի աղբիւրն է, որից ինքն կառավարութիւնը օգուտ է քաղում: անդադար տես-

ղեկանարար ժողովրդի կարիքների մասին, միջոց ունելով ծանօթանալ վարչական այս կամ այն սխալի, վարչութեան այս կամ այն զեղծման հետ:

Այդպիսով մամուլը ոչ թէ միայն հասարակութեանն է ծառայում, բայց ծառայելով նրան, մի և նոյն ժամանակ ծառայում է և ամբողջ պետութեանը:

Ռուսաց լրագրութիւնը անթիւ օրինակներ է բերում թէ ինչ մեծ ծառայութիւններ է մատուցել մամուլը թէ կառավարութեանը և թէ ամբողջ պետութեանը: Բոլոր բեֆորմների մրտաբերը, որոնք կատարվեցան ներկայ փառաւոր թաղաւորութեան ժամանակ, նախ և առաջ յարուցվեցան մամուլի մէջ, մշակվեցան նրա ձեռքով: Ազատ և անկախ մամուլը, ինչքան պակասութիւններ էլ ունենար, կարող է և պէտք է կառավարութեան հետ միասին թե թեկ տուած ընթացակարգի ամեն հասարակական խնդիրների խղճմաւոր մշակութեան մէջ: Մամուլը, երբ նա ազատ է լինում, դառնում է հասարակա-

կան կարծիքի անմիջական արտայայտութիւն, ժողովրդի պահանջների արտայայտութիւն, բայց մի և նոյն ժամանակ դառնում է և կառավարութեան ամենահաւատարիմ օգնական պետական կեանքի բոլոր ճիւղերի առաջադէմ ընթացքի մէջ:

Այս այս էին, մոտաւորապէս, այն մտքերը որ արտայայտում էին վերջին ժամանակ ուսաց բոլոր լրագիրները և ամսագիրները, ինչ զոյնի, ինչ ուղղութեան, ինչ կուսակցութեան և պատկանէին նրանք:

Ռուսաց մամուլը իր մտքերը յայտնելու ժամանակ չբաւակաւանացաւ միայն մայրաքաղաքների լրագրութեան մասին խօսելով, այլ պնդում էր որ գաւառական լրագրութիւնն էլ պէտք է ստանայ կատարեալ ազատութիւն, որովհետեւ առանց գաւառական լրագրութեան մայրաքաղաքի, կենտրոնական մամուլը անզօր է խղճմաւոր բար կերպով ծառայել պետութեան շահերին: Գաւառական լրագիրները այն փոքրիկ աղբիւրներն ու առուակներն են, որոնք

մտնւոյ են տալիս մեծ գետին, մայրաքաղաքի, կենտրոնական մամուլին: Մայրաքաղաքի լրագիրը անկարող է տեղեկանալ գաւառական այս կամ այն երեւոյթի վրա, որ նշանակութիւն ունի ամբողջ պետութեան համար, եթէ գաւառական լրագիրը ստիպված է լուել յիշեալ երեւոյթի մասին:

Արեւում է որ ուսումնարանները այդ բոլոր գաղափարները արձագանք գտան և կառավարչական բարձր շրջանների մէջ, երևում է որ կառավարութիւնը ինքն համբարաւ էր այդ մտքերի հետ, համակրում էր նրանց, որովհետեւ, ինչպէս մեզ տեղեկացրեց երեկվայ հեռագիրը, Ս. Պետերբուրգում Բարձրագոյն հրամանով հաստատվեցաւ մի յունձնաժողով մամուլի օրէնքները վերաքննելու համար: Հանձնաժողովի նախագահը Ռուսաստանի պետական ամենալուսաւորված մարդկանցից մէկն է, այն է կոմս Վալուեւի անդամներն էլ սրանք են. կոմս Լօրիս-Մէլիքով, Սարուրով, Ժողովրդական լուսաւորութեան մինիստր, Մակով, ներքին գործե-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ.

„ДВАДЦАТЬ ПЯТЬ ЛЕТЪ НА КАЗКАЗЪ“

1842—1867

Л. А. ЗИССЕРМАНА

1842 թուականներում Զիսսերմանը գալիս է Թիֆլիս, որտեղ և վիճակվում է նրան պետական հարստութիւնների պալատում (палата государственныхъ имуществъ) կանցլիարական չինովնիկի տիտուր կեանք անցկացնել: Այդ տեսակ կեանքը, ի հարկէ, չէ բաւականացնում նրա շարժուն, նոր պատկերներ և փոփոխութիւններ սիրող բնավորութեանը: Զը կարողանալով գտնել իր համար հասարակական յարմար շրջան (որովհետեւ բնակիչները առհասարակ տեղացիներ լինելով ունեցել են իրանց առանձին բնակարաններ և իրանց առանձին շահերը—մի խօսքով տարբեր են իրանց տեղական չինական կեանքից, որ և, ի հարկէ, չէր կարող գրաւել դէպի ինքը թաղմ երիտասարդին), նա անդադ ցանկութեամբ անձնատուր է լինում ընթերցանութեան: Ուրիշները եթէ նրա տեղը լինէին, չունենալով տեղու բնակարաններ և անխնայ աշխատութիւն, ու գիտէ իրանց արեւելութեան տալով, ոչնչացել էին, և այդպիսիները քիչ չեն եղել: Բայց այդ դուրսեան մէջ երիտասարդ Զիսսերմանը մնալ չէր կարող: Պատահամբ նա

ծանօթանում է Տուշինեան—Պիլիւս—Խեւսորեան շրջանի քաղաքացիներ—տեղական կառավարութիւնը—իշխան Զեկոպիւի հետ: Այդ ծանօթութիւնը նրա ապագայ կեանքին մի ուրիշ կերպարանք է տալիս, նա մտնում է իշխանի մօտ նրա բնակութեան տեղը—Սեդանի գիւղում—գրագրութեան պաշտօնով: Եւ այդպէս երիտասարդ Զիսսերմանը մտաւ տեղացի քաղաքացիների մօտ, մշտաւ վերապէս տեղական բնակիչների շրջանը—մի խօսքով մտաւ այն շրջանը, ուր մի ուրիշ ուսումնառութիւն և կը մղւէր: Բայց Զիսսերմանը չը յուսահատվելով երբէք, շատ հեշտ կերպով էր ծանաչել այն պահանջները, որոնց նա պարտական էր բաւականութիւն տալ, որպէս զի իր յարաբերութիւնները իր շրջապատող շրջանի հետ բնական լինեն և կանօնաւոր: Նա սկսեց սովորել տեղական լեզուն և միշտ միմյան թղթեր արտադրելով, ծանաչեց իր շրջապատող շրջանը: Այդպիսով իշխան Զեկոպիւի հետ և ուրիշ վրացի իշխանների հասարակութեան մէջ, նա շատ ուղիղ գծերով է նկարագրում վրացի կառավարութեան անհոգ կեանքը, նրանց չափ և անառակ բնութիւնը, նոյնպէս և առանց ուշադրութեան չէ թողնում այն ժամանակ նրանց մէջ ընդհանրացած արդարացի զգոհութիւնը դէպի այն չինովնիկները, որոնք վարվելիս են եղել միանգամայն դադանական բնույթով: Տարաբաղաբար այնպիսի մի հարց, որպիսին է բնակչաց յարաբերութիւնը դէպի տեղական իշխանութիւնները—միզ վիճակվում է որսով մի քանի տեղեկութիւններ միայն, այն ինչ այնպիսի մի հարցին, որպիսին է իշխանութեան յարաբերութիւնը դէպի հեղինակ և փոխադրաւոր—հեղինակը նուիրում է գրեթէ իր ամբողջ գիրքը: Այդ հարցը թէ նրա չէր զոյգութիւններ ամենազգուշաւոր թերութիւններից մէկը չը

լինի: Բայց մի և նոյն ժամանակ մեր կողմից բոլորովն անարդարացի կը լինէր, եթէ մենք չը յիշէինք և այն, որ հեղինակը ոչ միայն գծագրում է, այլ և նկարագրութեան ժամանակ զարթեցնում է շատ հետաքրքրելի հարցեր, որոնց թուին կարելի է վերաբերել ստորկ աղետականներին վերաբերեալ հարցը իմրեթում, Շամլի անգործութեան և թուրքեան վերաբերեալ հարցը տաճկական պատերազմի ժամանակ 1853 թ. և ուրիշները: Այն տեղը, որտեղ երիտասարդին վիճակվում է ծառայել, գտնվում էր լեզվիսեան գծի մօտ և որտեղ միշտ կատարվում էր պատերազմական գործողութիւններ: Այդ վերջիններս միշտ դրաւում են եղել հեղինակին դէպի պատերազմական ձեռնարկութիւնները, և այդ պատճառաւ նա միշտ բաւական է եղել այն առաջարկութիւններով, որոնք տալիս են եղել նրան իրաւունք մի լիցիւն առաջնորդել կամ երթնելու համար հեշտացնել այն ծանապարհները, որոնք մինչև անգամ անկարելի են համարվելու եղել տեղացիների աչքում:

Հանապարհօրեայ շրջակայ տեղերը առաջ լրագրութեան պաշտօնով, յետոյ իրեն քաղաքացիութեան, Զիսսերմանը բազմակողմանի կերպով ուսումնասիրում է պաշտօնի բի, խիղարհներ, նոյնպէս և Մայստի հասարակութեան մէջ մի քանի առուեսներ կենտրոն և այդ առաջնայի վերաբերմամբ հարցադրում է այնպիսի անգին նիւթեր, որոնք արժանի են մի առանձին ուշադրութեան:

Հենց այդ ժամանակամիջոցում նա յաճախ այցելում է Թիֆլիս, որտեղ իշխան Վարանցովը նրան ընդունում է շատ յարգանքով ու քաղցրութեամբ: Այդ այցելութիւնը տալիս է նրան միջոց ծանօթանալու մեզ իր չէրիզութիւններին մէջ ինչ-

պէս իշխան Վարանցովի գործունէութեան և նրա անձնական քաղաքացիութեան հետ իրեն մի պետական անձի, նոյնպէս և բոլոր նրան շրջապատողներին: Գրքի այդ մասը, կարելի է ասել, բաւականի հետաքրքրի նիւթեր է հաղորդում Զիսսերմանը չորս տարի շարունակ մնում է տալիս ինքն ունեցած անարդար յարաբերութիւններից սաստիկ զգլիւով, թողնում է այդ տեղը և անցնում պիտտուկ պաշտօնով Բեկոպեան շրջանը: Այստեղ ևս նա ցոյց է տալիս իր տեղու աշխատակրութիւնը—ուսումնասիրում է թուրքաց լեզուն և ուշադրութեամբ քննում իր շրջապատող հասարակական կեանքը: Եւ այդ նոր դրութեան մէջ նա ցոյց է տալիս նոյնպէս իր քաջութիւնը և գերազանցութիւնը, որի համար և նրան տալիս են հեծելազօրաց առաջին աստիճանը (корнетъ).

Այնք այստեղ նրա գործողութիւնը գիտմամբ ենք յիշում, որովհետեւ դա Զիսսերմանի ապագայ կեանքի վրա սաստիկ ներգործութիւն է ունեցել և ապա ուրեմն վայր է ձգել նրա չէրիզութիւնների դիրքը: Նրա նոր պաշտօնը այստեղ աւելի հասարակ է լինում և աւելի միակողմանի, ուստի և նրա հայեանքը կամայկամայ փոքրանում է և չէրիզութիւնները կորցնում են իրանց նշանակութիւնը:

Հեղինակը սկսում է աւելի և աւելի ձգտել դէպի իսկ զինուորական ծառայութիւնը և աշխատում է ամեն կերպով պօկ մտնել: Առաջին անգամ այդ նրան չէ յաջողվում, որովհետեւ այդ ժամանակ իշխան Նիկաուսով մտնում է բայց յետոյ, շատ երկար աշխատութիւններից յետոյ, վերջապէս փոխվում է Դադաստիկ պօկը: Արանով անա վերջանում է առաջին հատորը, որտեղ կարելի է գտնել բաւականին շատ տեղեկութիւններ այն բազմատեսակ դէպքերի ու հանգամանքների

Ի միասնոր, և Արագ, տպագրական վարչութեան մեծաւորը: Յուսանք և սպասենք:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍԻՐ ՄԵՐ ՀՈԳԵՆՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մեր մէջ յաճախակի է տեսնուիլ այն իրողութիւնը, որ մի եկեղեցու քահանայները միմեանց հետ ունեն ատելութիւն, վէճ և դէպի միմեանց կասկած հաստատութեան մէջ: Ան կարելի տեսնել նոցա միմեանց հետ խօսելիս, որ նոցա խօսակցութեան առարկան չը լինէր իրենց երրորդ ընկերը. սա, պէտք է ասեմ, մեր հոգեւորականները մէջ տիրած ամօթալի ակտերից առաջինն է, որով դժուարագոյն վարակված են բոլոր փարապետները: Բայց ի՞նչ էր կարծում, ի՞նչ մէջ պէտք է որոնել սրա պատճառը: Ի՞նչ կարծիքով սրա պատճառը նախ նոցա տղիւնութիւնն է և երկրորդ՝ նոցա «արդեանց» ձեռք բերու անտակա միջոցները: Ահա թէ ինչպէս. իւրաքանչիւր քահանայ ունի իրեն սեպհա կանցարած առանձին ցուցակով ծուխ, սրից և սպասում է իր արդեանց օգուտը (նոցանից մէկը ունի 70, իսկ միւսը 200-ից էլ աւելի). յայտնի բան է, այս այսպէս լինելով, իւրաքանչիւր քահանայ աշխատում է իր ծուխի քանակութիւնը շատացնել և այս պատճառով, ամենակերպ, թէ ներկի և թէ աներկի միջոցներ և խորամանկութիւններ գործ է դնում նա իր կողմը շրջելու ուրիշ քահանայներից ժողովուրդները և այսպէս նոցա ծխերի թիւը միշտ լինում է անհաւասար, որով մինը շատ ծուխ ունենալով և լաւ արդիւնք՝ շարժում է իր ընկերի նախանձը դէպի ինքը, որ չէր կամեցել զանազան քուտ և ցած միջոցներով, իր ընկերի նման՝ շատացնել իր ծուխի քանակութիւնը: Յիշատակին արժանի թիֆլիսի առաջնորդ Ալիազիսը աշխատեց իր վիճակի մէջ եղած քահանայների ծխերը հաւասարացնել և այս պատճառով իւրաքանչիւր

մասին, որոնց մէջ սկզբում—կովկաս եղած ժամանակ—վիճակված էր նրան ապրելու: Դժուար կ'արտաբերուէր կեանքը իր բոլոր երեւոյթներով, մշտական տեղափոխութիւնը մի գիւղից միւս գիւղ, փոստատարի ճանապարհը Եօրասիոյ դէպի Ալեքսան, ահա երկրորդ հատորի գլխաւոր բովանդակութիւնը: Բացի այդ, մենք այստեղ կարող ենք գտնել և ուրիշ շատ տեղեկութիւններ, —այն է Գաղստանի և Չեչնիայի ժամանակակից պատերազմը եղանակները, Հաջի-Մուրադի խաղաղութիւնները, Դամիլի զինուորական տաղանդը, իշխան Արդուսթիսկու 1852 թ. դէպի Կամուկա արած արշաւանքները, Դամիլի արշաւանքը դէպի Կախկէ և նրա հետեանքը և վերջապէս Վրաստանի արշաւանքը դէպի Չեչնիա 1854 թ. վերջերում մի քանի անշան դէպքերի մասին: Մի և նոյն ժամանակ մենք մտածում ենք, թէ հեղինակը ի գուր է իրան յանդիմանում, երբ նա փոքր ինչ թեքվում է իրան չընկալած չեչնի չընկալի: Այդպիսի մի նեղ չընկալում թէ և այնքան ևս աղքատ է կեանքի պատկերները, բայց իր միակերպութեան պատճառաւ չունի մի այնպիսի հետաքրքրութիւն: Ընդհակառակն, նոյն իսկ թեքումը ունի այն նշանակութիւնը, որ ծանօթացնում է մեզ հեղինակին չընկալած չեչնի չընկալի հետ, այդ բառի բուն նշանակութեամբ, այսինքն ծանօթացնում է մեզ կովկասի պատմութեան հետ, որքան այդ թղթ է տալիս Վրացականութեան ընդհանուր ձևը և կեանքի ներքին ընդհանուր պայմանները: Հեղինակը այդ շատ լաւ է հասկացել, ուստի և նա իր Վրացականութեան մէջ ծանօթացնում է մեզ բազմապատկառ առարկաների հետ: Այդ ձևը հենց շատ ընդունված է: Որովհետև շատ անբաղաժանութիւն կը լինէր Չխսերմանի կողմից, եթէ նա մօտ 900 երես նուիրելով միմիայն իր անձնաւորութեան, գրէր մի երկու խօսք տեղա-

կան իշխանութեան ունեցած յարաբերութեան մասին դէպի ինքը: Չխսերմանը այդպէս չէ վարվում, բայց նրա դէպի ինքն ուղղված յանդիմանութիւնները մէջ չէ կարելի չը նկատել և այն, որ նա կատարելագոյն չէ հասկացել անձնական յիշողութիւնների նպատակը: Բայց թէ այսպէս և թէ այնպէս երկար գրավիճակ մի այնպիսի անձնաւորութեամբ, երբ նա չունի մի համաշխարհային նշանակութիւն կամ մի սխալագործութիւն—մեր կարծիքով—է գրել նշանաւոր թերութիւնը: Չխսերմանը անտարբեր չէ մնում դէպի այն մի քանի փոփոխութիւնները, որ դրանից առաջ կովկասում պատահեցան,—այդ Վրացական հեռանալն է և Մուրադիլի նրան փոխարինելը: Չխսերմանը Մուրադիլի ոչ համակրում է և ոչ զուգաստանում, որովհետև վերջինս տեղական կեանքի պայմանները չը ճանաչելով, կամեցում էր իր խօսքերով «Смѣшались Кавказъ. обратитъ въ упрямую новгородскую губернію». Չխսերմանի արհամարհանքը կրկնապատկում է այն ժամանակ, երբ Մուրադիլը երմաւովին իր ուղղած նամակի մէջ աշխատում է նկարագրել կովկասի զօրքերը քննել և զրկված սպարտական ոգուց, բայց մի և նոյն ժամանակ նա կատարեալ համակրութեամբ է նայում Գ. Ի. Միրսկու նրան գրած պատասխանի վրա: Չխսերմանը իր գրքի վերջում հաղորդում է մեր հոգեւորականութեան և Օսեթիի եկեղեցիների մասին մի քանի տեղեկութիւններ, և յետոյ թէ և Չեչնի մասին տալիս է մի թեթիւ ծանօթութիւն, բայց և այնպէս չենք կարող չը յայտնել մեր անկեղծ շնորհակալութիւնը, ըստ որում նա այստեղ—իր նկարագրութեան մէջ—չարժում է մի այնպիսի կարեւոր հարց ընդհանրելի կեանքի վերաբերմամբ, որպիսին է երկրագործական եղանակը ու ձևը: Չեչնիները, հեղինակի խօսքով, ունեն իրանց

կաւոր է: Դիցուք թէ մի քահանայի ծխալաներից մէկը մի շարքով մի այլ գիւղ գնալով, վախճանվում է. տեսնում ենք որ նոյն տեղի թաղող քահ. ստանում է նրա բոլոր արգիւնքը: Սեպհական քահանայն բողբոջում է գործաւալին. նա կամ առանձին և կամ քահանայների ներկայութեամբ կամեցում է վճռել այս կնիքը. բայց այստեղ առաջին տեղը բռնում է կիբը. եթէ քահանայներից մէկը որ դէպի քեզ լաւ յարաբերութիւններ չունի, քո դէմ արտասանեց մի բան՝ ամենից էլ կնքվում է այս վճիռը, որովհետև, նրանք մի առանձին քաղցրութիւն և բաւականութիւն են գտնում, երբ զրկում են իրանց ընկերին: Բայց ահա պտտվում է բաղդի չար անիւր և այն չարախօսի մի «տղա» ժողովուրդն էլ վախճանվում է մի այլ գիւղում, կանոնի համեմատ նրան պէտք է զրկել, բայց արի ու լսի նրա հարահրոյցը. էլ հրապարակ էլ մարդ, էլ ոչ մի արարածին չէ թողնում, որ չը բողբոջի այս անիրաւութեան դէմ: Բայց մօտ 20 տարի է որ նրան հովիւում եմ ու հիմայ ուրիշը տանի, այս խիղճ է և այն... Վերջապէս սա թէ իր բարեութեան շանթերի, թէ բարեկամների և թէ կեղծաւորութեան շնորհիւ և կամ մի նոր կանոն սահմանելով, այսուամենայնիւ ստանում է եթէ ոչ բողբոջ գոն մասը, բայց նորեն ծան ապշած նայում է իր չորս կողմը և ու՛մնասի այս, որ դարման գտնի. նա լուռ է, նա չունի այն հազար ու մէկ միջոցները, խրատած որսորդներ, ինչպէս ուրիշները. նորան գուցէ օգնէր կանոնադրութիւնը, եթէ ունենար, որ բողբոջը պետերին, բայց այն էլ չունի և այսպէս սահում են նրա աննախանձիկ օրերը տխուր կերպով... և նրանից պահանջում են որ իր մեծերին հնազանդ լինի... Հնազանդութիւնը հարկաւոր է, այո, բայց ոչ մեր մեծերի պէս մեծերին, որոնք իրանց գործերով շատ չեն կարողանում բարի օրինակ ցոյց տալ փոքրերին: Մեծերից և փոքրիկներից փոքրերը և անփոքրները պէտք է օրինակ առնեն. փոքրերի պակասութիւնը տեսնելիս մեծերը պէտք է խրատեն փոքրերին: Բայց հակառակն ենք տեսնում: Նաո անգամ մեծերը փոքրերից պէտք է սովորեն, օրինակ առնեն. սովորելը ամօթ բան չէ: Եթէ ամօթ լինէր այն, ուրեմն մեծերը իրանց աւագներից այդպէս

անձանց մասին, որոնք զխաւոր դեր են խաղացել մեր անցեալում—ինչպէս Վրացական, Գոյովիւր, Բոգէնը, Նէյդգուրդը, իշխան Երմուզովը, Բարոն Վրացիլը, Վրէլիսին, իշխան Արդուսթիսկին, իշխան Բէրուսովը, Երզնկանովը, իշխան Իվան Անդրեւիկովը—և մի և նոյն ժամանակ մի թեթիւ ակնարկ ձգելով մեր իշխանութեան և ադմինիստրատիւ և ամբողջ տարվայ չընկալում: Անտառներն ևս ընդհանուր հասարակական սեպհականութիւն են համարվում. իւրաքանչիւր նորեկ իրաւունք ունի անտառից իր համար մի բաժին կտրել, բնակվել նրա մէջ և այդպիսով կատարեալ տիրապետող լինել նրան: Մենք զխաւորապէս ուղարկութիւն ենք դարձնում այն բանի վրա, թէ որքան կարեւոր նշանակութիւն ունի ընտելիների կեանքի այդ կողմը հետազոտելը և նրան ուսումնասիրելը, ըստ որում մասամբ դրանով միայն կարելի է դատել, թէ պատմաբաններն ինչպէս է կազմվել այդ տեսակ զգացողութիւնը դէպի ընդհանուր շարքը, որի դարգացմանը այդքան նպաստում է ընկերական և հասարակական կեանքը: Այդ հետազոտութիւնը ամենից լաւ կարող է մեզ բացատրել այն թէ մինչ և որ աստիճան օգտաւէտ է արտաքին կարգապահութիւնը բնակիչների ամենամօտ գործերում և թէ ամենապիտան արտադաններից մէկը կովկասի մշտական ապստամբութիւնների արդեօք այն պիտի կարծել, որ իշխանութեան ամենամօտ անդամները անապատային կերպով են միջամտել իշխանութեան ներքին կեանքի մէջ: Վերջացնելով այն ամենը, ինչ որ առիթ ունեցանք խօսելու Չխսերմանի գրքի մասին, մենք կարեւոր ենք համարում ակնարկել, թէ այն աղքատ տեղեկութիւնները, որ մենք ունենք կովկասի անցեալի ու ներկայի վերաբերմամբ, այդ գիրքը տալով մեզ հարուստ տեղեկութիւններ այն

ՆԱՄԱԿ ՂԱԼԱՐԻՑ

Յուլիսի 17

«Մշակ» լրագրի 109 համարումը առիթ ունեցաւ կարգաւոր պ. Նորայրի նամակը, որը մի ուրախալի տպագրութիւն գործեց տեղւոյս հասարակութեան վրա, մանաւանդ երիտասարդութեան վրա:

Պ. Նորայրը յիշում է տեղւոյս երիտասարդներին, որոնք կարող էին թղթակցել լրագրներին, կամ մի որ և իցէ ժամանակ դրել են, իսկ այժմ մոռացել են իրանց պարտաւորութիւնը: Այդ կարծիքի հետ չեն կարող ևս համաձայնել և մի փոքր բացատրութիւնից յետոյ, նա ինքն էլ համաձայն կը լինի ինձ հետ: Արդէն յայտնի է թէ, ինչ փոթորիկներ են սպասում նրան, ով վստահանում է թեղթակցութիւն ունենալ մի հայ լրագրի հետ: Որովանձանց մասին, որոնք զխաւոր դեր են խաղացել մեր անցեալում—ինչպէս Վրացական, Գոյովիւր, Բոգէնը, Նէյդգուրդը, իշխան Երմուզովը, Բարոն Վրացիլը, Վրէլիսին, իշխան Արդուսթիսկին, իշխան Բէրուսովը, Երզնկանովը, իշխան Իվան Անդրեւիկովը—և մի և նոյն ժամանակ մի թեթիւ ակնարկ ձգելով մեր իշխանութեան և ադմինիստրատիւ և ամբողջ տարվայ չընկալում: Անտառներն ևս ընդհանուր հասարակական սեպհականութիւն են համարվում. իւրաքանչիւր նորեկ իրաւունք ունի անտառից իր համար մի բաժին կտրել, բնակվել նրա մէջ և այդպիսով կատարեալ տիրապետող լինել նրան: Մենք զխաւորապէս ուղարկութիւն ենք դարձնում այն բանի վրա, թէ որքան կարեւոր նշանակութիւն ունի ընտելիների կեանքի այդ կողմը հետազոտելը և նրան ուսումնասիրելը, ըստ որում մասամբ դրանով միայն կարելի է դատել, թէ պատմաբաններն ինչպէս է կազմվել այդ տեսակ զգացողութիւնը դէպի ընդհանուր շարքը, որի դարգացմանը այդքան նպաստում է ընկերական և հասարակական կեանքը: Այդ հետազոտութիւնը ամենից լաւ կարող է մեզ բացատրել այն թէ մինչ և որ աստիճան օգտաւէտ է արտաքին կարգապահութիւնը բնակիչների ամենամօտ գործերում և թէ ամենապիտան արտադաններից մէկը կովկասի մշտական ապստամբութիւնների արդեօք այն պիտի կարծել, որ իշխանութեան ամենամօտ անդամները անապատային կերպով են միջամտել իշխանութեան ներքին կեանքի մէջ: Վերջացնելով այն ամենը, ինչ որ առիթ ունեցանք խօսելու Չխսերմանի գրքի մասին, մենք կարեւոր ենք համարում ակնարկել, թէ այն աղքատ տեղեկութիւնները, որ մենք ունենք կովկասի անցեալի ու ներկայի վերաբերմամբ, այդ գիրքը տալով մեզ հարուստ տեղեկութիւններ այն

Ս. Պետերբուրգ, Ա. Գալստեանց

հետև մեր հասարակութիւնը դեռ չէ հասել զարգացման այն աստիճանին, որ կարողանայ մի ճշմարիտ խօսք յարգել և ընդունել մասնաւոր մեր Ղազարի հասարակութիւնը, որի մէջ կան այնպիսի անձինքներ, որոնց համար չը կայ խղճմանը և սուրբ բան: Նոյն բարեւոր են համարում չնչնայն մի մարդու նոր և թարմ ոյժը և մեծ քաջութիւն են համարում, երբ ճշմարտութիւն պատգամողին յաղթում և ճնշում են:

Եւ այսպէս թղթակիցները ստիպված դանդաղան արգելքներէ, չեն կարողանում գրել, որովհետեւ ընդունելով, որ մի կտոր հաղթ քաղցր է և անհրաժեշտ մարդու համար, ուրեմն եթէ նորանից էլ գրվին, պիտի մտորեցան դառնան և կարելի է, որ մի այլ վատ բան էլ պատահի, ով գիտէ, Ղազարունը այդ սպասելի է...

Հինգ կամ չորս տարի կը լինի, որ մեր հայ լեզուագիրները մի օրինաւոր նամակ Ղազարից չեն տրպել իրանց էջերունը, և եղանակներ էլ ունեցել են բոլորովին դատարկ բովանդակութիւն. բայց տեղիս հասարակութեան դառն դրութեան պատճառներով մասին ոչ մի նամակում չէ երևել որ և իցէ քննադատութիւն: Որովհետեւ ամենքը վախենում են, թէ մի գուցէ վերջին կտոր հայից գրվին: Ուստի եւս եւս բացառութիւն չը կազմելով նոյն դրողների մէջ, որքան կը ներքի ինձ, կը նկարագրեմ նամակիս մէջ մի երկու երեւոյթներ մեր հասարակութեան կենսից:

Յունիսի վերջին աւարտվեցան տեղիս երկսեռ ուսումնարանները հայաբնակութիւնները, որոնցից երկաց, որ բացի մի երկու վարժապետներից, ոչ մէկը իր աշակերտներին հիմնաւոր բան չէ սովորացրել: Իսկ ինչ կը վերաբերի աշակերտների բարոյական դարգացմանը, այդ մասին մի միջնորդական բան ասել չեմ կարող: Բայց յոյս ունենք, որ այսուհետեւ նորնորեալ հոգաբարձուները կաշխատեն զարգացնել բարեկարգելու և արդէն գործի սկզբից երևում է նոյն աշխատութիւնը: Օրինորայց ուսումնարանը գտնվում էր մինչև այսօր գրեթէ մի փլատակված տան մէջ, ուր ցուրտը և անձրևը ազատ մուտք էին գործում, ինչպէս աւապատի մէջ, այնպէս որ ձմեռը ցրտից երբեք խայք բոլորովին դարձ քնին գալիս և վարժապետները առանց պարագայի ստանում էին իրարից վարձը: Բայց մի քանի հին հոգաբարձուներ արդարացում էին իրանց ասելով, թէ Ղազարում դժուար է գտնել լաւ տարանոց տուն: Գուցէ ընթերցողը կը կարծէ, թէ երևի, արժան լինելու պատճառաւ վարձել էին այդ տունը, բայց ինչ արժան, երբ Ղազարի նման քաղաքում այդ տունը ստանում էր վարձ 450 ռուբլի:

Բայց նոր ընտրված հոգաբարձուները ուշադրութիւն դարձրին այդ տան անդամաւորութեան վրա, ժողով կազմեցին, և մեծ գիտարկութեամբ սղատեցին օրինորայց ուսումնարանը այդ բնակարանից և որոշեցին գնել մի ուրիշ տուն, որի հրամանը ստացվեցաւ յունիսի 5-ին վիճակաւոր աւաջնորդից և չուտով դպրոցը, յոյս ունենք, կը տեղափոխվի այնտեղ:

Ռուսաստանի ամեն ծայրից լուրում են գտնված ներ մորեխի մասին. փողը էր մնացել, որ մեր գաւառն էլ ժողովին կերպովուր գաւառը, եթէ թերեւեան վիճակի նահանգապետը չաշխատէր և չուտով կազմակերպ չուղարկէր ոչնչացնելու այդ մարդկային թշնամիներին: Բայց քաղաքից մի մարդ էլ չը պահանջեց, միայն 400 ռուբլի օժանդակութիւն ինքնից: Բայց որովհետեւ մեր քաղաքային վարչութեան կառավարիչն ուսումնարանը քաղաքային վարչութեան կառավարիչն է, ուստի կարողացավ չը ժողովարարութիւնն էլ կատարելապէս չաջողվեցաւ, և միայն 200 ռուբլի հաւաքվեցաւ:

Նահանգապետը, իմանալով տեղիս հասարակութեան անտարբերութիւնը այդպիսի մի գործի մէջ, հեռագրով հրամայեց մարդիկ ժողովել: Այդ միջոցում գտնվեցաւ մի բարերար այն է պ. Ֆարբիկեանը, որ նուիրեց միայն իր կողմից 200 ռուբլի բարեգործութիւնը սկսեցին բարեբան աւսելով, թէ այդ կը նշանակէ ապագայ տալ մեր երեւոյթ, միջէ մենք եւ կարող չենք տալ, և այլն:

Վերջացնելով նամակս, չեմ կարող չը միշտ այն, որ մեր քաղաքի դուռն այն աստիճան անկարգ, անհոգ և անվայելուչ կերպով է կատարում իր պարտաւորութիւնները, որ չառ ժամանակ չէ անցել, որ նրանից խելցին քաղաքի տուրքերը հաւաքելու իրաւունքը և յանձնեցին պոլիցիային, որովհետեւ հաւաքել չէր կարողանում և ծառայողների ուժերից իր ժամանակին չէր վճարում:

Մի ծառայող

ՆԱՄԱԿ ԳԱԶԱՐԱՐԻՑ

15 յուլիսի

Եթէ մի հայաք զարմենք Ալէքսանդրապոլի վիճակի քաղաքի գիւղերի վրա, կը տեսնենք, որ իսպառա զուրկ են դպրոցական միջնորդութիւնը: 50-աւոր գիւղեր անցկենալուց յետոյ հազիւ կարելի է տեսնել մի դպրոց, ուր մի քանի աշակերտներ խառն ի խառն իրարու վրա լցված՝ առաւօտից մինչև իրիկուն դորտերի նման կուգում են իսկ երեկոյեան ինչպէս բանտարկեալներ, ազատվելով այդ ճիւղ բանտից, գնում են իրանց տըները: Եթէ քաղաքի բերանը կարելի լինէր մի գիւղում գտնել փոքր ի շատէ կանոնաւոր մի դպրոց, ցաւօք արտի պէտք է ասել, որ նա էլ տեսնական չէ, այսօր կայ, իսկ վաղը չը կայ: Վաղը դպրոցը բոլորովին փակվում է: Ոչ ոքի չէ ազդում այս Երևանի մեղաւորութիւնը. ասում են «գիւղացին ինքն է սարքել, ինքն էլ քանդում է, մենք ինչ անենք»:

Արդարեւ, եթէ գիւղացին հասկանար դպրոցի օգուտը, կարծիք չը կայ, որ այնուհետեւ նա ինքը կը հիմնէր, ինքը կը հոգար ու կը մտածէր նրա առաջադիմութեան վրա, առանց մէկի կամ միւսի օգնութեանը, բայց տարաբաղդարար ինքը չէ գնում այդ պահանջը: Գուցէ ամենք ասեն, միջէ քաղաքների դպրոցները մի և նոյն ժամանակ գիւղացից համար չեն: Այո, ճշմարիտ է, բայց միջէ ամեն գիւղացի միջոցներ ունի իր օրդուն քաղաք ուղարկելու, որ ուսում առնէ, մասնաւոր դեռ եւս առաջ պէտք է նրա աչքը բանալ, նրան հասկացնել ուսման նշանակութիւնը և ապա ասել թէ առաք թո որդին Ալէքսանդրապոլի այս ինչ դպրոցը, թող կատարելագործել իր ուսումը: Գիւղացին չի յաջողանում իր չունել, նա հեռաւոր չէ, նա նկատում է տեսնում է այն առաքիլայն, որը ուղղակի ըկած է նրա աչքի առաջ: Գիւղացին իր գիւղի մէջ միայն երկու տեսակ տուն է տեսնում, և այդ երկուսն է ճանաչում. առաջինը՝ իր խրճիթը, որը ծառայում է իր կենցաղավարութեան համար, իսկ երկրորդը՝ եկեղեցին, այն է հոգու փրկութեան համար. դրանցով նա արդէն ամեն բան կատարեալ է համարում:

Ով պէտք է այս գիտարկութեանց առաջնաւորն, ում պարտքն է ճանաչացնել գիւղացուն ուսումնարանի և ուսման նշանակութիւնը. — ի հարկէ ամեն մարդի վրա էլ պարտք կայ, բայց զԷԼ խաւորապէս նրանց է, որոնց ձայնը աւելի ազդու և զիւրաւանջութիւն է ստոր ժողովրդի ականջին, որոնց խօսքը համեմատաբար աւելի ազդում է նրանց սրտերին, որոնց միայն է ճանաչում ժողովարարը եւս մի հոգով փրկութեան միջնորդը: Կրանք են մեր հոգեւոր հայրիկները — վիճակային առաջնորդները և ծխական քահանայքը, իս թուում եմ այն քահանաների մասին, որոնցից շատերը ոչնչով չեն զանազանվում ժողովրդից՝ ոչ լեզուով, ոչ մտքով և ոչ մի այլ գաղափարով, իսկ ինչ որ վերաբերում է վիճակային առաջնորդների մի քանիսի անտարբերութեանը, այդ չէ կարելի առանց մեղադրանքի թողնել:

Ղազարի նահանգում հայաբնակ գիւղերի թիւը համեմատաբար փոքր է Ալէքսանդրապոլի վիճակի գիւղերից, բայց ընդհանրապէս ուսումնարանների թիւը անհամեմատ կերպով շատ է վերջինից: Ղազարի և Բաթումի վիճակի գիւղեր պատիւ առաջնորդ Գրիգորիս եպիսկոպոսը ոչ թէ միայն ուսումնարանների համար գործում է անխնայ աշխատութեամբ թէ գիւղերում և թէ քաղաքներում, այլ մի և նոյն ժամանակ վերանորոգում է նրանց արեղանքով: Բարոգում, խրատում է գիւղական քահանաներին, ճանաչել իրանց պարտաւորութիւնը, միւս կողմից հոգ է տանում վանքապատկան կալուածների մասին և հսկում է երկու վիճակների վրա եւս մեծ եռանդով: Այս քաղաքացիական հոգեւոր զբաղման մեծագործ անձը չէ միտում պատահած անպարտութիւնների ժամանակ, վեհանաճարաւ յաղթում է ամեն արգելափակում իր նպատակները իրագործելու համար, որոնց մէջն է միայն գտնում իր բաւականութիւնը: Թող սա օրինակ լինի ունենց գործելու միջոցաւ ժամանակ ունենք աշխատելու:

Յ. Տ. Բարսեղեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ

Շաբաթ օր, յուլիսի 26-ին ուղարկեցինք սովորող օգնող Կ. Պոլսի հայոց մասնաժողովին 2000 ռուբլի կարասիք տալ խոսպետների ձեռքով: Ուրեմն ընդամենը միջակի խոսպետութիւնը մինչև այժմ ուղարկել է 33,000 ռուբլի յոգուտ Հայաստանի սովորաւորներին:

«Новое Время» լրագիրը հաղորդում է որ ներքին գործերի մինիստրութիւնը զբաղված է այժմ մասնակի վերաբերութեամբ եղած օրէնքների վերաբերութեամբ: Լրագիրը հաստատ արդիւններից իմացել է, որ վճարված է մասնակ ազատութիւնը խախտող զանազան պայմանները վերջնականապէս վերցնել:

Մի այսպիսի երկատարից ՋԱՌԱՌԱՅՈՒՅՈՒՄՈՒՄ 1 ռուբլի յոգուտ Հայաստանի սովորաւորներին:

Մեզ հաղորդում են, որ թիֆլիս-Վաղրկապատի ճանապարհի վրա, Անանուրի և Պաշանուրի լճերի մէջ այս օրերս վեց հոգի լաւ դիմաւորված աւազակներ յարձակվել են դրամ տանող փոստի սայլի վրա, փորձել են զբաւարկել յափշտակել, բայց այդ նրանց չէ աջողվել, որովհետեւ հէնց այդ միջոցում վրա են հասել մի տարախառն և մի սայլ: Աւազակները երկուսից փախել են, ոչինչ չը կարողանալով տանել:

«Прав. Вѣстн.» լրագիրը հաղորդում է, որ Օդէսայում հաստատված է քաղաքային վարչութեան մէջ մի նոր պաշտօն, այն է քաղաքացիների օգնականի պաշտօնը:

Թիֆլիսից գրած մի թղթակցութիւն «Голосъ» լրագրում դատարկութիւն է տալիս Անդրկապատի դատաստանական մասի դրութեան վերաբերութեամբ: Թղթակիցը ասում է որ այժմ բարձրագոյն իրաւաբանական ուսում ստացած երիտասարդները քաղաքի մէջ են իսկականապէս ամեն ազգութեան մէջ, Ուրեմն շատ հեշտ կը լինէր նշանակել մեր երկրի այլ և այլ մասերում այնպիսի հաշտարար դատաւորներ, քննիչներ և այլն, որոնք ծանօթ են այս կամ այն տեղական լեզուի հետ, որպէս զի կարողանան ժողովրդի հետ անմիջական յարաբերութիւն ունենալ, առանց դիմելու թարգմանիչներին, որոնք մի կողմից շատ տգէտ, անընդունակ և վատ պատրաստված են լինում, միւս կողմից կարող են այս և այն կողմից հակվել, յափշտակվելով նիւթական շահերով: Բայց զբաղդապէս, աւելացնում է «Голосъ» լրագիրը թղթակցիցը, մնացած հակառակն է լինում. մեր դատաստանական իշխանութիւնը գործից դիմումար աշխատում է նշանակել հայ քննիչին և հաշտարար դատաւորին Ալանէիայում, վրացուն առաջը Հայաստանում, յոյնի վրաստանում և այլն: Այդպիսով, աւելացնում է թղթակցիցը, արդարադատութիւնը ոչ թէ միայն իր նպատակին չէ հասնում, այլ ընդհանրապէս ծնեցնում է տեղական ամօրթի մէջ թերահաւատութիւն դէպի դատաստանական գործը:

Այժմ, երբ ժողովրդական լուսաւորութեան միջնորդ կոմս Տոլստոյ հրամարական է տեսել իր պաշտօնից, Ռուսաստանի ամբողջ մասերը քննադատում է նախկին մինիստրի գործունէութիւնը: Ռուսաց «Голосъ» ամսագիրը բերում է այդ առիթով հետեւեալ խօսակցութիւնը մի առարկայի մի անդիտացում մէջ. «Չարմանալի ազգ էք դուք առանձինը — «Եւրոպէ» կարծում է — «Չեղ ժողով ամեն բան թարս է և ոչ թէ ինչպէս մեզ ժողով: Որքան մեզ ժողով քննադատում են մինիստրին քանի որ նա պաշտօնի մէջ է որպէս զի նա կարողանայ փոխել իր արած կարգադրութիւնները և ոչ թէ երբ նա իր պաշտօնը թողել է: Այն ժամանակ արդէն ուշ է և ոչինչ օգուտ չը կայ քննադատել կարգադրութիւնները, որոնք մարդուց կախված չեն, որովհետեւ նա այլ եւս պաշտօնի մէջ չէ»:

«Вѣстникъ Европы», «Дѣло», «Отеч. записки» ամսագիրները, «Голосъ», «Молва», «Новое Время», «Новості» և ուրիշ լրագիրները, բոլորն էլ միաբերան փախազում են մասնակ ազատութիւնը Ռուսաստանում:

Ռուս լրագիրները հաղորդում են որ ծայրագոյն յանձնաժողովի կարգադրութեամբ վերցվում է այսուհետեւ այն իրաւունքը, որ ունէին Ռուսաստանի բոլոր թէ վերանորոգական և թէ քաղաքական վարչութիւնների մեծաւորները, առանց պատճառների և բացատրութեան, կամայական կերպով հրաժարեցնել իրանց տարաբաղդարան ծառայութիւնը: Այդ իրաւունքը անուանված էր հեռացնել ծառայութիւնից 3-րորդ կէտի հիման վրա: Այդ սարսափելի կէտը ծանօթ էր բոլոր ծառայողներին:

Յունիսի 28-ին մեր տաղանդաւոր բանաստեղծ պ. Իսաֆաէլ Պատկանեան ՆՈՒՆԱԽԱՅԻՆԱՆԻՑ հասաւ Թիֆլիս:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅՈՒՆԱՅԱՆ

Լրագիրների մէջ կարդում ենք հետեւեալ թղթակցութիւնը Աթէնքից:

Այստեղ ստացված հեռագիրները հաղորդեցին, որ Բ. Կուռը մտադիր չէ երթարի վեր Բերլինի կոնֆերենցիայի վճիռն, և որ թիւրքաց կառավարութիւնը տեղափոխում է թիւրքաց գործերին կալիբուում և Հօբարտօ փաշայի հրամանատարութեամբ զինուորական մի նաւատորմ է ուղարկում յունական ջրերը: Այդ լուրերից դրդված տեղական մասնաւոր առաջարկում է յունական կառավարութեամբ:

Թեանը պատրաստվել պատերազմի համար, որովհետեւ առանց պատերազմի Յունաստանը անկարող կը լինի միացնել իր հետ իրան վիճակված երկրները:

Թէսալիայից հաղորդում են, որ երբ Բերլինի կոնֆերենցիայի վճիռը՝ այդ նահանգը Յունաստանի հետ միացնելու մասին յայտնի եղաւ Թէսալիայի մի քանի քաղաքների մէջ, թիւրքերը չափազանց շփոթվեցան և թիւրքաց վարչութիւնը արգելեց քրիստոնեայ բնակիչներին խօսել քաղաքական գործերի մասին, մասնաւոր Թէսալիան Յունաստանի հետ միացնելու մասին: Այդ հրամանը չը կատարողը ենթարկվում է առաջին անգամ 5 թիւրքաց լիւրա տուգանքի, իսկ երկրորդ անգամ բանտարկման մի քանի ամսով: Նոյն օրը, երբ յայտնի եղաւ Թէսալիայում Բերլինի կոնֆերենցիայի վճիռը, Ալմիրայի մէջ եղած կանոնաւոր զօրքերի դուռը յայտնեց, որ եթէ իր ուժերը չը ստանայ, ամբողջապէս կը ցրվի, մասամբ կը միանայ և մասամբ կերթայ հայրենիք: Նահանգապետ փաշան առաջ աշխատում էր սպանալիքներով հանդատացնել դուռը, բայց տեսնելով, որ նրանք չեն ազդում զօրքերի վրա, ստիպված էր վճարել դուռիցն ուժերի մի մասը և միւս օրը նրան տեղափոխել: Քրիստոնեայ բնակիչները երկուսի մէջ են գտնվում և սպասում են օրից օր, որ Թէսալիան պաշարված կը յայտնվի: Դիմադրող ունենալով այն հանգամանքը, որ Նանիկան միանում է Յունաստանի հետ, աւելորդ չէ մի քանի տեղեկութիւններ հաղորդել նրա ազգաբնակչութեան և զարգացման աստիճանի մասին: Նանիկայի ամբողջ ազգաբնակչութիւնը 155,228 է, որոնցից 147,298 յոյներ են, 4,500 բացառապէս յունարէն խօսող թիւրքեր և 3450 հրէաներ: Ամբողջ գաւառի մէջ 373 յունական ուսումնարաններ կան, 11,057 աշակերտներով և 324 ուսուցիչներով: Թիւրքաց սակաւաթիւ ուսումնարաններ կան միայն Նանիկա քաղաքի մէջ և նրանց մէջ էլ առաքիլները աւանդում են յունարէն լեզուով:

ՄԵՍԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Կ. ՊՈԼԻՍ, 28 յուլիսի: Սուլթանը հրամայեց զինուորական մինիստրին ուղեորով Գուլցիս 2000 զինուորներով: Մինիստրը խոստանում է, որ Գուլցիսի նահանգը կը յանձնի չերնօգորցիներին աննշան ժամանակամիջոցի մէջ: Սուլթանը հրամայեց Յունաստանի իսկական սահմանական գիծը պատրաստել և յանձնել պետութիւններին: Սպասում են, որ գործը բարեկամաբար կը վերջանայ:

ՍՕՖԻՍ, 28 յուլիսի: Բօլքարական իշխանը հրամարկեց հաստատել բօլքարական ազգային զօրքերի այն օրէնքը, որի համեմատ զօրքերի հրամանատարը ընտրված պէտք է լինի:

ՏԱՇԿԵՆՏ, 28 յուլիսի: Արդարաւանք բարձրացաւ Կարուլի զահը յուլիսի 27-ին: Աշխատանքների բոլոր մեջները մէջ շնորհակալութեան մաղթանքներ կատարվեցան: Ամուսնաւոր գետի ձախ ափի վրա գտնված աշխատանքների բոլոր քաղաքները լուսաւորված էին: Մօզարի և Շերիկի մէջ թնդանգիներ արձակվեցան 101 անգամ: Յունիսի 26-ին Կառլսբադն այցելեց Ֆերիսի նահանգը, զննեց Կառլսբադի սահմանը: Մեր զօրքերը Ալալի մէջ են:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 29 յուլիսի: Օգոստոսի 2-ին ուղեորվում են Ախալ-Տեկիի զօրարած ժինը Կարմիր Խաչի ուղորմած քոյրերը:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԻՆԻՆԻ

Մ Ա Մ Ո Ւ Լ Ի Տ Ա Կ Ի Յ Դ Ո Ւ Ր Ս Ե Կ Ա Ի Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ

3-5

1-3

3-5

42-100

1—3 (1)

Բժշկանոցի գիրենկաօր Լխսիցեմ:

15—20

Հոգաբարձուք { Սարգիս Միրզայեանց,
Եսատուք Խաչակեանց

9—10 (2)

Յուլիսի 1-ից ՎԱՐՇԱՎԱԿԱՅԱ ՊԵԿԱՐՆԻԱ-
ՅԻՆ ինչ կը բացվին ՍՆԵՆԱԿՆԵՐ, որոնց
կարելի կը լինի ստանալ ԿԱՖԷ, ՇՈՎՈՒԱԿ,
ԹԷԷ և պտորաստոված հանքային զանազան
ջրեր:

6-22

4-5